

ՄԱՂԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ

Հասմիկ Գալստյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ hasmikgalstyan1979@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 25.04.2022, գրախոսվել է 28.04.2022, ընդունվել է տպագրության 07.08.2023

DOI: 10.53548/0320-8117-2023.2-232

Ներածություն

Բազմաթիվ կենցաղային առարկաներ ունեն երկրորդային կիրառական նշանակություն և կարևոր դեր են խաղում ժողովրդի ծիսական կյանքում: Նմանատիպ առարկաներից է մաղը, որը բանահյուսական տեքստերում հանդես է գալիս գործառության ամենատարբեր դրսևորումներով: Ժողովրդական ու քրիստոնեական տոնածիսական համակարգերում մանկան ծննդի, հարսանեկան և թաղման ծեսերում մաղը գործածվում է ոչ միայն որպես տարա, մաքրող կամ զտող գործիք, այլև ստանում է որոշակի ծիսական նշանակություն:

Ժողովրդի առասպելաբանական ընկալումներում երկինքը պատկերացվում է իբրև մաղ, որից ակնկալվում է անձրև ու առատություն: Որպես հրաշագործ հատկություններով օժտված առարկա՝ մաղը գործածվում է նաև ժողովրդական բժշկության մեջ: Ժողովրդի հավատալիքային համակարգում մաղը գուշակության գործիք է: Մեզ հաջողվել է մասնակցել մաղով գուշակություն անելու (նետ դնելու) գործողությանը Շիրակի մարզի Հողմիկ և Վահրամաբերդ գյուղերում, որի մասին խոսվում է ստորև, և կատարվում է համեմատական քննություն:

Մաղի նշանակությունն ու անվանումները

Որպես խոհանոցային կիրառական առարկա՝ մաղը նախատեսված է մաղելու, մաքրելու, անհրաժեշտն ավելորդից առանձնացնելու համար: Ժողովրդական կենցաղում այն օգտագործվում է նաև որպես տարա՝ տարբեր ապրանքներ պահելու կամ տեղափոխելու նպատակով: Հայ ժողովրդական հեքիաթներում հանդիպում ենք «պառավ գչամիչ լըցեց մաղի մեջ»¹, «մաղմ նուշ»², «մեյ մաղ իլին (լցրեցին) խավի ծյու»³, «մաղմ յիլին (լցրեցին) միս»⁴,

¹ ՀԺՀ 1984, 570:

² ՀԺՀ 1999, 555:

³ ՀԺՀ 1998, 216-217:

⁴ ՀԺՀ 1998, 234:

«մաղմ գյատա»⁵ և այլ արտահայտությունների: «Նռան խատեն» հեքիաթում «Թագավորու լաճը կըլըցնի մաղ մը նուռ, մաղ մը մարգրիտ, մաղ մը ոսկի, մաղմ էլ ակունք-ջավահիր, մաղմ էլ կրամոխիր, կղնի վեր մշակներաց գլխուն, կասի. Տարեյք կան ածեք, իսոր հեքիաթն վով ասի՝ ես էն կառնեմ ձիկ կնիկ»⁶: Մաղը նաև չափի միավոր է, օրինակ, մեկ մաղ կորեկ⁷, մաղմ ալուր⁸ և այլն:

Մաղ են կոչվում նաև մեղունների գործած քջիջը և փայտաշեն տան քառակուսու մի մասը⁹: Մուշ-Տարոն ազգագրական շրջանը ներկայացնող «Խըշկոկե» հեքիաթում պառավը պատմում է հետևյալը. «Մըր թավլի (ախոռ) մեկ մաղ կոտրավ, էրկու գոմեշ փիցան (սատկեցին) ի տակ»¹⁰: «Սասնա ծռեր» էպոսում նույնպես հանդիպում է «Մաղ ըմ հառիք (առաստաղ) տարավ դեն»¹¹ արտահայտությունը:

Հայ բառարանագիրները տալիս են մաղի տեսակների բազմաթիվ անվանումներ՝ իրենց բարբառային տարբերակներով՝ *ըշտարար* (Արցախ), *շա-տարար* (Արարատ), *սայուր* (Ջեյթուն), *սառաւր* (Վան, Մուշ), *խախալ* (Լոռի, Ջանգեզուր)¹² և այլն: Որոշ դեպքերում մաղերի անվանումները պայմանավորված են կատարած գործառնությամբ՝ *այլուրմաղ* (այլուր մաղելու համար), *կալմաղ* (կալում կիրառվող), *քարմաղ* (հատիկը քարից զատելու համար), *ցորենի մաղ* և այլն: Մաղերի որոշ տեսակներ անվանվել են ըստ կազմության, ինչպես, օրինակ, *ծարմաղ* (ծիու մագից), *փոկեմաղ* (կաշվից), *շար(ե)մաղ*¹³ (շղարշից) և այլն:

Բառն ունի դարձվածաբանական հարուստ կիրառություն, որտեղ բացահայտվում են քննվող կենցաղային առարկայի բազմանշանակությունն ու ժողովրդական պատկերացումները (*մաղ ծախող* - բռնա¹⁴, աներես, *մաղը ծակ* - բացքերան, անխելք, պարտք ունեցող, *մաղը պարեն կախվել* - գործը վերջացնելուց հետո հանգստանալ, *մաղը պարոնել* - մահից ազատվել, *մաղի գլուխը բան գցել* - գործը ավարտել, *մաղի գլխին փոշի չմնալ* - օգուտ չունենալ, *մաղի ծակով անցկացնել* - մանրագնին ստուգել, *մաղի մեջ պահել* - մեծ խնամք տանել, *հարյուր մաղի հաց կերած* - հմուտ, փորձառու, *հազար*

⁵ ՀԺՀ 1998, 454:

⁶ ՀԺՀ 1999, 505:

⁷ ՀԺՀ 1999, 329

⁸ ՀԺՀ 1963, 423:

⁹ Մալխասեանց 1944, 243:

¹⁰ ՀԺՀ 1985, 486:

¹¹ Սասնա ծռեր 1951, 775:

¹² Բրդյան 1972, 414:

¹³ Շարմաղն ամենանորբ հյուսվածքով մաղն է, որով մաղված այլուրն ամենաբարձր որակի է: Կարծում ենք՝ այստեղից է գալիս «շարմաղ աղջիկ» համեմատական արտահայտությունը:

¹⁴ Մաղ պատրաստելու «մենաշնորհը» տրված է բռնաներին, որի համար էլ հայերը նրանց կոչում են «մաղագործ» կամ «մաղ ծախող»:

մաղով անց կացած – լիրբ, աներես, *մաղով ջուր կրել*¹⁵ – ապարդյուն գործ անել¹⁶, նաև՝ *մաղ կապող* – խաբող, *բռնի խախալ* – պնդերես, անամոթ¹⁷:

Մաղի հիմնական նշանակությունն ինչ-որ բան մաղելն է, մաքրելը, և այս գործառույթը դրսևորվում է անեծքի բանաձևեր պարունակող «չար աչքի» դեմ ուղղված ժողովրդական աղոթքներում: Օրինակ՝ չար աչքը «*մաղով մաղվի, շփարարով շփարարվի, խըխալով խըխալվի*»¹⁸, կամ՝ «*Ֆողի պես մաղվեր, խախալի պես ծկծկուրվեր*»¹⁹ և այլն:

Ժողովրդական առակներից մեկում այլուրի ու մաղի այլաբանությամբ ներկայացվում է չարչարանքի ու տառապանքի միջոցով մաքրվելու քրիստոնեական գաղափարախոսությունը, որտեղ մաղը բնորոշվում է իբրև չար սատանա, իսկ այլուրը՝ տանջանքի ենթարկվող հոգի:

Ալիւր և մաղ

- Ո՛վ շրջմուլիկ սատան չար (Ո՛վ շրջմուլիկ չար սատանա),

Յե՛րբ լըկիցես գեղկելիս (Մինչև ե՛րբ պիտի տանջես ինձ՝ եղկելուս):

Ասէր ալիւր վըշտահար.

Առ մաղն ի դառըն լալիս (Մաղին դառը լալով ասաց այլուրը վշտահար):

Եւ զայս ցալիւր մաղն ասէր (Եվ այս ասաց մաղն այլուրին):

- Բայց լըկելովդ և մաքրիս (Բայց տանջվելով նաև մաքրվում ես):

Մի՛ դու գըըննիչդ անգոսներ (Դու քննիչիդ մի՛ արհամարհիր (մի՛ պարսավիր),

Թէ լաւանալ կամիցիս²⁰ (Եթե կամենում ես լավանալ):

Առասպելաբանության տեսանկյունից մաղը կապվում է «վերևի»՝ երկնքի, արևի, ամպերի, անձրևի, լույսի գաղափարի հետ: Տոնաձիսական համակարգում մաղը ստանում է տարբեր խորհրդանշական իմաստներ, կիրառվում է որպես պտղաբերության, հարստության և առատության խորհրդանիշ, ժողովրդական բժշկության մեջ՝ որպես բուժող գործիք:

Մաղի տիեզերական ու ժամանակային պատկերացումները

Ոչ միայն հայերի, այլև աշխարհի շատ ժողովուրդների հավատալիքներում ու աշխարհի կառուցվածքի մասին մարդու պատկերացումներում երկինքն ընկալվում է որպես «Աստծու մաղ՝ երևակայելով իբրև ծակոտկեն

¹⁵ Այս արտահայտությունը հատկապես տարածված է ժողովրդի մեջ՝ «հարսանիքիդ մաղով ջուր եմ կրելու» տարբերակով, որով ասացողը խոստանում է անհնարին անել խոսակցի համար: Հեքիաթի հերոս Ճուկիլը դեհն պատվիրում է մաղով ջուր բերել իր համար, որ խմի (ՀԺՀ 1998, 360), որտեղ նորից անհնարին կամ ապարդյուն գործ անելու գաղափարն է արտահայտված:

¹⁶ Սուքիասյան, Գալստյան 1975, 408:

¹⁷ Նյութերը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում բանագետ Թ. Հայրապետյանին:

¹⁸ Հարությունյան 2006, 82:

¹⁹ Լալայան 2004, 228:

²⁰ Քաջունի 1847, 182:

մարմին, որի ծակերից գիշերները երևում են աստղերի լույսերը, և անծրև (կամ ձյուն) է մաղում»²¹:

Մաղի՝ որպես երկնքի ընկալումը նախ և առաջ տեսնում ենք հայ ժողովրդական հանելուկներում: *Երկինք-արև-լուսին* եռյակը հանելուկներում ներկայացվում է մաղի ու հավի կամ մաղի ու ակունքի այլաբանությամբ²²: Օրինակ՝ Մին խախալ մաղ՝ էրկու հավ մեջին, մինը՝ կեծ, մինը՝ տաք-տաք, կամ՝ Էն ի՞նչ, թե ինչ. էրկու ակունք ի մի մաղ, մինը խիստ տաք, մինը՝ պաղ: *Երկինքն ու աստղերը* ժողովուրդը երևակայում է որպես մաղ ու ծու, մաղ ու չորթան և այլն: Օրինակ՝ Մի մաղ չորթան քշերը տրի տուռը, առավոտ ելա՝ չկար, կամ՝ Իրիկուն դրի մաղ մը հավկիթ, վանկուց չկար հեչ մեկ հատիկ²³: Վերոնշյալ միասնությունների մեջ են մտնում նաև *երկինքն ու ամպերը*՝ (օրինակ՝ Ամպ օրողաց, ձուն թորորաց (մաղն ու այլուրը) ամբողջացնելով երկնային ողջ համայնապատկերը (երկինք, արև, լուսին, աստղեր, ամպեր):

Մաղի վերաբերյալ կան որոշ հանելուկներ, որոնք ուշագրավ են դիցաբանական պատկերացումների անդրադարձման իմաստով, որտեղ մաղը համեմատվում է ամպամած, ձյուն տեղացող երկնքի հետ. Պուճուր Աստուծ, ձյուն ա կյամ (մաղ) կամ՝ Փոքր Աստված ձյուն է թափում (մաղ)²⁴: Բանագետ Ս. Հարությունյանի դիտարկմամբ՝ «...տվյալ դեպքում Աստվածը երկնքի ժողովրդական անվանումն է: Այդ ապացուցվում է վերոհիշյալ հանելուկի մի ուրիշ փոփոխակով. Պուճուր երկինք, տակը ձին ա գալիս (այլուրմաղ): Վերաբերյալից հետևում է, որ ժողովրդական հանելուկների մեջ պահպանվել է երկնքի մասին մի հնամենի պատկերացում, ըստ որի՝ երկինքն անձնավորվել է երկնային գերագույն էակ համարվող Աստծու մեջ և այդպես էլ գիտակցվել է»²⁵:

Հայ բանավոր ավանդության մեջ այլուր մաղելով՝ ծածկաբանությամբ, ցույց է տրվում ժամանակի, տարվա եղանակի փոխարինումը մեկը մյուսով: Ժողովրդական ավանդավեպերի մեջ հիշատակվում է մի Հերթյան Հեղինե իշխանուհի, որ տենչում էր Բլեջունյան Պարիսին և ուզում էր առևանգել նրան: Բռնի ուժի դիմելով՝ ամռանը պաշարում է դղյակը: Չկարողանալով հասնել իր ուզածին՝ «իշխանուհին նաժիշտներով բարձրանում է դղյակի բարձր տանիքը և երկու ձեռքով մաղը բարձր բռնած՝ սկսում է ցորեն մաղել, հասկացնել ուզելով՝ թե պետք է պաշարումը հետաձգել ձմռան, երբ ձյուն է տեղում վերևեն՝ մաղված ցորենի նման»²⁶:

²¹ Մայիսսեսանց 1944, 243:

²² Հայ ժողովրդական հանելուկներում մաղը հանդես է գալիս նաև ուրիշ իմաստով, օրինակ՝ Էն ինչն ա, ինչը, Տանեն խաղ անեն, Բերեն պատից կախ անեն (մաղ), Գևորգյան 1999, 198:

²³ Հարությունյան 1965, 7, 9:

²⁴ Հարությունյան 1960, 94:

²⁵ Հարությունյան 1960, 94:

²⁶ Մովսիսեան (Բենսե) 1916, N 25, 798:

Գեղարքունիքում չքնող երեխային դնում են մաղի մեջ և տանում նախրի առաջ՝ ասելով. «Ձորից ես գալում, քուն բեր իմ տղին»²⁷: Այստեղ մաղը կրկին դիտարկվում է որպես ժամանակի ցուցիչ և դառնում գիշերային երկնքի խորհրդանիշ: Վերոնշյալ բանաձև - բանադրանքով սար ու ձորից վերադարձած նախրին պատվիրվում է գտնել ու բերել երեխայի կորած քունը:

Մաղի կիրառությունը ժողովրդական ու քրիստոնեական տոնածիսական համակարգերում

Հայոց տոնածիսական համակարգում, մասնավորապես *Ջալիկ*, *Համբարձում*, *Վարդավառ* տոների համատեքստում մաղին տրվում է ծիսական նշանակություն:

Ջալիկի օրը մատուցվող պատարագի ժամանակ գավիթներում կանգնած մարդիկ մաղերը պահում էին երեսներին և դրանց միջոցով նայում արևին՝ հավատալով, որ կտեսնեն հարություն առած Քրիստոսին²⁸: Երևույթի զուգահեռները տեսնում ենք ռուսական հավատալիքներում: Քառասունքի օրը իր տուն եկած մահացածին կարելի էր տեսնել, եթե բարձրանային վառարանի վրա և այնտեղից նայեին մաղի միջով²⁹:

Համբարձման տոնի և *վարդավառի* ժամանակ մաղը կարևոր դեր ունի, որն իր արտացոլումն է ստացել ժողովրդական խաղիկներում: Ջահել աղջիկները մաղերի մեջ դնում են համբարձման նախորդ երեքշաբթի օրը դաշտերից հավաքած ծաղիկները և վիճակ հանելիս երգում.

Վարդ եմ քաղել <i>մաղերով</i> ,	Ես չոբան եմ, շուն չունեմ,
Վեր եմ դրել շաղերով,	Էս կեղըմը ի՞նչ ունեմ,
Տեսնեմ՝ յարս գալիս է,	Տուն եմ շինել ճաղերով,
Առաջ գնամ խաղերով ³⁰ :	Վարթ եմ քաղել <i>մաղերով</i> ³¹ :

Մաղը՝ առատության խորհրդանիշ

Մաղը ընկալվել է որպես «համընդհանուր պահպանակ՝ պաշտպանություն աղքատությունից, դժբախտությունից և թշնամական ուժերից»³²: Օրինանք-բարենաղթանքի՝ «Տաշտ ու մաղդ լիք էղնի, քու հացդ առատ էղնի, գերանդին չկարա կտրի»³³ տեքստում ընդգծվում է մաղի՝ առատության խորհրդանիշ լինելու իրողությունը: Այս համոզմունքը հատկապես երևում է

²⁷ Բանասաց՝ Լուսինե Ղոնջյան, ԴԲԱՆ 2022, Գավառ:

²⁸ Նազարեանց 1878, 80-81:

²⁹ Топорков 2009, 435.

³⁰ Աբեղյան 1940, 8:

³¹ Խենյան 2008, 296:

³² Լիսիցյան 1981, 64, Բենսէ 1972, 68:

³³ Մկրտչյան 2016, 348:

Նուրին Նուրին եկել է,
Շալե շապիկ հագել է,
Կարմիր գոտիկ կապել է.
Մեր Նուրինին փալ տվեք,
Տաշպերով ալուր բերեք,
Մաղերով ջուր բերեք,
Մեր Նուրինին կշտացրեք,
Ուտենք, խմենք, քեֆ անենք³⁵։

Գլխուս վրայ ամալ մը կայ,
Ամալէն բարիք կը տեղայ...
Մաղ մաղ թող տեղայ,
Մաղ մաղ բարիք թող տեղայ...³⁷:

Մավ հալավն փըրփըռում ա,
Անկաճներս դրռըռում ա,
Տաշտը դարտակ, մաղը՝ կախ,
Փորս սոված դրռըռում ա³⁹:

⁴⁰ Բանասագ՝ Սուրեն Հոբոսյան, ԴԲԱՆ 2022, Երևան:

Մաղը՝ նորածնի պահպանակ

Մաղը լայն կիրառություն ուներ մանկատառության (երեխայի նկատմամբ տարվող խնամքի) ծեսում և գործածվում էր տարբեր նպատակներով: Մաղին տրվում էր պահպանակի նշանակություն, հանդես էր գալիս չարխափան գործառույթով և տղաբերքի ժամանակ երեխային պաշտպանում էր չարքերի կողմից հափշտակվելուց: Կարծում էին, որ մաղի միջով քաշկն (քաջք) անցնել չի կարող⁴¹: Երեխային ծնվելուց հետո պառկեցնում էին մաղի մեջ⁴² կամ ծննդից հետո երեք օր օրորոցի տակ մաղ էին դնում: Ուշ քայլող երեխայի ոտքերը մաղի մեջ էին դնում, որ շուտ քայլի⁴³: Միևնույն մաղով նորածնին խարբալում (մաղում) էին շան լակոտի հետ, որ չար հրեշտակի հարվածից ազատ լինի և շան պես ճարտար դառնա⁴⁴:

Երբեմն մայրն ու երեխան *թպղի* (չարքերի հարուցած հիվանդություն) էին լինում, և երեխան մանկության ընթացքում մահանում էր: Այդ ցավից նորածնին ազատելու համար Զավախքում ծնունդից անմիջապես հետո փոկե մաղի մեջ էին առնում⁴⁵: Բորչալուում նույն գործողությունը (խախալի մեջ էին առնում) կատարում էին երեխային չար աչքից պաշտպանելու նպատակով⁴⁶:

Եթե այդ տանը նորածին երեխա չէր մնում, Զանգեզուրում նոր տղաբերքի ժամանակ ծննդկանին չոքեցնում էին այնպես, որ երեխան ընկներ մաղի՝ խախալի մեջ⁴⁷: Այս երևույթի զուգահեռը դրսևորվում է հայկական մեկ այլ հավատալիքում, որը կենցաղավարել է մինչև XX դարասկիզբը: «Երկունքի ժամանակը կրճատելու և թպղությունը թոթափելու նպատակով նոր թրծված և նախապես չօգտագործված կճուճը թոնրի նման թաղվում էր այնտեղ, ուր երկունքն ապրողն էր լինելու: Թպղոտ ծննդկանը չոքում էր կճուճի եզրին այնպես, որ պտուղն ընդունվեր նրա մեջ»⁴⁸: Թե՛ մաղը, թե՛ կճուճը երկրաչափական նշաններով, իրենց ձևով հիշեցնում են երկինքն ու երկիրը, իսկ կառուցվածքով՝ այսրաշխարհն ու անդրաշխարհը: Ազգագրագետ Գ. Շագոյանը հայոց հարսանիքի համատեքստում խոսելով մաղի ծիսական նշանակության մասին՝ գրում է. «Մաղը, որպես խորհրդանիշ, երկիմաստ է՝ այս առումով նմանվելով դռան ու շեմին: Միաժամանակ նշանակում են և՛ «մուտք», «անցանելիություն» դեպի «այն աշխարհ», և՛ չար ուժերի համար սահման, այսկողմ ներթափանցելու խոչընդոտ»⁴⁹: Այս պատկերացումներով

⁴¹ Լիսիցյան 1969, 304:

⁴² Լիսիցյան 1969, 302:

⁴³ Բանասաց՝ Կարինե Սահակյան, ԴԲԱՆ 2022, Գյումրի:

⁴⁴ Նազարեանց 1878, 26:

⁴⁵ Լալայեան 1896, 274:

⁴⁶ Լալայեան 1903, 232:

⁴⁷ Լիսիցյան 1969, 200-201, 302:

⁴⁸ Բդոյան 1986, 90:

⁴⁹ Շագոյան 2011, 208:

է պայմանավորված նշված երկու առարկաների կիրառությունը ժողովրդական տարբեր ծեսերում:



Նկ. 1. Էսթեր Մխիթարյանի «տան սուրբ Նարեկի» ձեռագիր հմայիլ, Շիրակ, գ. Լեռնուտ (լուսանկարը՝ Հ. Գալստյանի)

Որպես պահպանակ՝ ժողովրդի մեջ տարածված էր հմայիլների կիրառությունը, որոնք պարունակում են հմայական ու մոգական զանազան աղոթքներ ու բանաձևեր՝ չար աչքից գերծ մնալու, չար ոգի թաղիին հալածելու, դիվահարներին բուժելու և բազմաթիվ այլ ակնկալություններով⁵⁰: Շիրակի Լեռնուտ գյուղի տան սրբերից մեկում պահվում է հմայիլի մի օրինակ (Նկ. 1), որի էջերից մեկի վրա արված գրառումը իր ձևով մաղ է հիշեցնում: Կարծում ենք, որ չնայած հմայիլը պահպանակ է ինքնին, որպես լրացուցիչ պահպանիչ ուժի՝ դիմել են ասելիքը մաղածն գրելու հնարքին:

Մաղի կիրառությունը հարսանեկան ծեսում

Հայկական ավանդական հարսանիքի կարևորագույն ծեսերից է *ալյուրմաղեքը*, որը ազգագրական տարբեր շրջաններում հանդիպում է *տաշտաղեք*⁵¹, *մաղժաժում* կամ *գաթաթուխ*⁵² և այլ անվանումներով: Ծեսը կատարվում էր հարսանյաց շաբաթի հինգշաբթի օրը: Արցախում հարսանիքի հացի ալյուրը մաղելու պատիվը տրվում էր մի փոքրիկ աղջկա, որը «չոքում է տաշտի առաջ և բռնում ձեռի մաղը, մի ուրիշ փոքրիկ տղա երեխա ալյուր է ածում մաղի մեջ, և աղջիկը մաղում է»⁵³: Ազգագրական մյուս շրջաններում ծեսի դերակատարները փոխվում են: Բորչալուում ընտանիքին մտերիմ կանանցից առաջին ալյուրը մաղելու համար ընտրում էին «բեղմնավոր և որդու, ամուսնու կսկիծ չտեսած կնոջ, որպեսզի հարսնացուն էլ նրա պես բեղմնավոր լինի և կսկիծ չտեսնի»⁵⁴: Պարսկահայերի հարսանեկան ծեսում հարսանիքի համար թխելու հացերի ալյուրը մաղում էին ազապ տղաները⁵⁵: Զավախքում

⁵⁰ Հմմտ. Խաչիկյան 2012, 14-31:

⁵¹ Լալայան 2004, 129:

⁵² Լալայան 1983, 151:

⁵³ Լալայան 1988, 346:

⁵⁴ Լալայան 2004, 129:

⁵⁵ Մշակ 1872, N 48, 4:

«մաղժաժումի» համար հրավիրում էին երեցկնոջը, որը «չոքում է տաշտի առաջ, յուր բերած երկու մոմը խփում տաշտի ծայրերին, վառում, որ հարսը զույգ մնա և պայծառ, լուսավոր լինի, մի կարմիր քող ձգում երեսին, որ հարսը ամոթխած լինի: Այուրը մաղում է բոլորովին լուռ, որ հարսը համավոր լինի և շատ չխոսի»⁵⁶: Այստեղ կարծում էին, որ եթե երեցկինը չմաղի գաթաթուխի այուրը, ապա հարսը կխելագարվի: Այուրը մաղելիս մաղի մեջ քաղցրավենիք էին լցնում, մաղելիս՝ օրհնում, որ նորապսակների կյանքը քաղցր լինի:

Արճակի բուն հարսանեկան ծեսում «արորք գնացող (հարսնառ գնացող) ազապբաշինները գլխներին դրված մաղերի մեջ տանում էին հարսի կոշիկը, վերարկուն ու շրջագգեստը: Մյուս մաղի մեջ տանում էին բաղարջ ու հալվա, գործածվելիք հինսան և հարսի մորն ընծայվելիք զոքընչփերթին»⁵⁷: «Քահանայի առաջ էր բերվում մաղի վրա դրված քողը: Հարսի հետևից գնացող պարողների ետևից երկու հոգի գլխներին կամ թևերի տակ դրած տանում էին մի-մի մաղ, մեկի մեջ՝ 25-30 հատ բաղարջ, նաև հարսի քողը»⁵⁸: Խորհրդային տարիներին մաղը փոխարինվել է խոհանոցային մեկ այլ առարկայով՝ սկուտեղով, որը կոչվում էր «սինի»: Այժմ հարսնառ գնացողները հարսի նվերներն ու ընտանիքի համար նախատեսված հյուրասիրությունը տանում են զամբյուղներով⁵⁹:

Մեղրաձոր գյուղում հարսին հայրական տնից հանելուց հետո հարևանները իրենց մաղերը գլորել են հարսի հետևից՝ հարսի վերադարձը հայրական տուն կանխելու նպատակով: Եթե այդպես չանեին՝ «գեղին մէ փոռճանկ գուկեր»⁶⁰:

Ազգագրագետ Հ. Չոլաքյանը, ներկայացնելով հարսանեկան «Հուպպապաթ, հուպպապաթի» պարերգը, գրում է. «Պարերգը կատարուած է հարսն ու փեսան տան բակը մտցնելէ ետք: Կեսուրը կը դիմաւորէր հարսը: Ներկաները մաղ մը կը դնէին կեսուրի գլխուն վրայ ու այս երգով կը պարեցնէին»⁶¹:

⁵⁶ Լալայան 1983, 152:

⁵⁷ Ավագյան 1978, 65:

⁵⁸ Ավագյան 1978, 67:

⁵⁹ Մինչև օրս Շիրակում հարսնառ գնալիս նվերների զամբյուղները պարեցնողներին կոչում են «սինի խաղցընողներ»:

⁶⁰ Այս մասին իր ֆեյսբուքյան էջում խոսում է ազգագրագետ, բանահավաք, Կոտայքի Մեղրաձոր գյուղի մշակույթի տան տնօրեն Գ. Գոգոյանը՝ «Բարբառասերների ու բանահավաքների ակումբի» բացման առթիվ, Գոգոյան 2022:

⁶¹ Հ. Չոլաքյանն իր ֆեյսբուքյան էջում «Քեսապի հարսանեկան երգեր» խորագրի տակ ներկայացնում է հետևյալ մեկնաբանությունը. «Հուպպապաթ» Տէր Զօրի արաբերէն խօսուածքին մէջ կը նշանակէ «մեծ մայր»: Կենթադրեմ, որ բառը հին հաւատալիքի մը վերապրումն է: Ան կը պատկերացուի ապան գլխուն նետած, կուրծքերը կախ, երկար կօշիկով կանացի կերպարանքով մը, որ շատ պզտիկներ ունի, զորս «մոճակները կերան»: Անով կը վախցնեն փոքրիկները: Բարբառին մէջ չունի «մեծ մայր» իմաստն ու կիրարկութիւնը, ամէն անճոռնի ու այլանդակ երեսոյթ կը համեմատեն անոր

Հարսանեկան ծեսի առանցքն ու բուն գաղափարը պտղաբերությունն է: Մաղը, լինելով պտղաբերության ու արգասավորության խորհրդանիշ, դրվել է պտղավորման սկզբի՝ մոր գլխին՝ ցույց տալով երևույթի կարևորությունը: Հայտնի է նաև, որ սկեսուրը նորապսակների ուսերին լավաշ է գցում տուն մտնելիս: Քեսաբում այդ սովորույթը չկա. հավանաբար, դրան փոխարինում է մաղը՝ որպես հացի ու ալյուրի հետ անմիջականորեն կապվող առարկա:

Հայ բանահյուսական տեքստերում, հատկապես հարսանեկան և թաղման երգերում, հաճախ հանդիպում են «*քար քաշել*», «*ավազ մաղել*» դարձվածաբանական արտահայտությունները, որոնք նշանակում են սաստիկ չարչարվել, տանջվել, շատ ծանր աշխատանք կատարել: Բենսեի «Մշո հարսանիք» պիեսում վերոնշյալ արտահայտությունները հնչում են որպես օրհնանք. «Հարսնեվորներուց հալվոր քեռի Պետոն, բաժակն ի ձեռ, ուրախութենի արտըսութն ի աչք, կօրնե գլխեսեն.

Էն ճամպով օր դու կերթաս՝

Քար քաղած, ավազ մաղած.

Էն գետով, օր դու գրնցնաս՝

Գետ՝ գինի, կամուրջն՝ օսկի»⁶²:

Մեջբերված տեքստն ընդգրկված է նաև հարսանեկան երգերի շարքում⁶³: Թե՛ հարսը, թե՛ փեսան մի աշխարհից անցում են կատարում դեպի այլ աշխարհ, և հարսանքավորները օրհնանքի միջոցով նրանց բարեմաղթում են կյանքի հեշտ ու հանգիստ ճանապարհ:

Անհիշատակ պառավին ուղղված աղոթքներում էլ տեսնում ենք նույն բանաձևը. «Խազար, խազար օղորմի քյե, անհիշատակ պառավ: *Քյար քյաղիցիր, ավազ մաղիցիր*, պոպիկ ոտնով իրեք տիր Երուսաղեմ կնացիր: Աստծուց չուզեցիր քյու առքյավութեն, ուզիցիր աշխարհի խառնուկ ծամերաց, խառնուկ կաժերաց խտըկութեն: Խազար տիր՝ խազար օղորմի քյե, աղքատ, անտեր, անհիշատակ պառավ⁶⁴: Ազգագրագետ Լ. Սիմոնյանի դիտարկմամբ՝ «...պառավի քար քաղելն ու ավազ մաղելը նույնանում է ճանապարհ բացելուն: Այս առումով առանձին նշանակություն է ստանում այդ մոտիվի կապը մահվան ծիսակարգի հետ: Ս. Հարությունյանը նշում է, որ «Սասնա ծռեր» էպոսի մի տարբերակում Միերը դուրս կգա այն ժամանակ, երբ «...*քար քաղեն, ավազ մաղեն*», և դա զուգահեռվում է Լոռիում հանգուցյալին լողացնելու, ոտքերը լվանալու ծեսում միևնույն բառակապակցությունը պարունակող օրհնանքի հետ. «*Քարդ քաղած ըլի, հողդ մաղած ըլի*»: Ըստ բանա-

հետ, «Ընտրզ հուպպապաթ մի» /Հուպպապաթի պես է/: Հարսանեկան այս երգը իր էությունը կատարել էր, Չոլաքյան 2022:

⁶² Մովսիսյան (Բենսե) 1972, 97:

⁶³ Մովսիսյան (Բենսե) 1972, 109:

⁶⁴ Ավագյան 1978, 107:

գետի, խոսքը դեպի անդրաշխարհ տանող ճանապարհի ազատ, անխոչընդոտ լինելու մասին է»⁶⁵: Հաճախ լողացնողը հանգուցյալի անունից է խոսում՝ արտահայտելով նույն ցանկությունը.

*Շարմաղ բերէք, վըրիս ֆէօղը մաղեցէք,
Տաշճին բերէք մերմեր քարեր կըլեցէք,
«Մուրատսուզ է ելեր» վրաս գրեցէք*⁶⁶:

Մաղը՝ թաղման ծեսի համատեքստում

Թաղման ծեսում մաղի կիրառությունը կապվում էր նաև հանգուցյալի հոգու մաքրման հետ: Բյուրականի՝ X դարում կառուցված, Սրբ Հովհաննես Մկրտչին նվիրված միանավ բազիլիկ եկեղեցու հյուսիսային և արևելյան կողմի պատուհաններին պահպանվել են քարե ցանցափեղկեր⁶⁷ (նկ. 2), որոնք մաղ են հիշեցնում:



Նկ. 2. Բյուրականի Սրբ Հովհաննես եկեղեցին, X դար
(լուսանկարը՝ Ավետիս Գրիգորյանի)

Կարծում ենք՝ այս փեղկերը դրվել են թոչունների մուտքը կանխելու նպատակով: Սակայն ժողովրդական պատկերացումներում այս ցանցափեղկերը կապվում են թաղման ծեսի հետ: Հոգեհանգստի պատարագի ժամանակ հանգուցյալին դրել են դեմքով դեպի գլխավոր խորանը՝ բեմը, որի վերնամասում են գտնվում ցանցկեն պատուհանները: Մահացածի հոգին դուրս է գալիս այդ պատուհաններից և արդեն մաքրագործված՝ համբարձ-

⁶⁵ Սիմոնյան 2015, 193-194:

⁶⁶ Մուշեղ Վարդ 1899, 804:

⁶⁷ Մեզ չհաջողվեց գտնել հայկական ճարտարապետական մեկ այլ հուշարձան, Բյուրականի Սրբ Հովհաննես եկեղեցուց բացի, որը պատուհաններին ունենար նմանատիպ ցանցափեղկեր:

վում երկինք⁶⁸։ Այս հավատալիքի զուգահեռը տեսնում ենք Կարելիայի (Զառնեժիե, ՌԴ) ժողովրդական պատկերացումներում։ Այստեղ մահից խուսափելու համար երեխաներին արգելվում էր մաղով նայել։ Հավատում էին, որ «անմեղ հոգին անցնում է մաղով»⁶⁹։

Թաղման ծեսում մաղի կիրառության երկրորդ տարբերակը մարդու՝ աշխարհից կուշտ գնալու գաղափարի հետ է կապվում։ Ազգագրական բազմաթիվ շրջաններում հանգուցյալի կրծքին, քթանցքերին կամ բերանին⁷⁰ նշխարք էին դնում, հացի կտոր, որ հանգիստ գնա այն աշխարհ։ Յ. Նազարյանցի վկայությամբ՝ հացը երբեմն փոխարինվում էր մաղով։ Մահացածի երեսին մաղ էին դնում՝ ասելով. «Թող աչքդ կշտանայ էս փուչ աշխարհիցը»⁷¹։ Գալիցիայում հանգուցյալին տանից դուրս հանելուց հետո հարազատները նրան նայում էին մաղի միջով, որպեսզի շատ չվշտանան նրա համար և արագ մոռանան⁷²։

Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի գյուղերում մինչև օրս կենցաղավարում է մեռելոցներին գերեզմանոց քաղցրավենիք տանելու սովորույթը։ Կանայք փոքրիկ տոպրակների մեջ մեկական բուռ կոնֆետ են լցնում և բաժանում ճանապարհին հանդիպած մարդկանց, երեխաներին, հիվանդներին ու աղքատներին։ Դա համարվում է մեռելի բաժինը, և հաճախ բաժանում, վերջացնում են մինչև գերեզմանատուն հասնելը⁷³։ Մինչև 2010-2012 թթ. քաղցրավենիքը գերեզմանատուն տարվել է մաղով։ Ազգագրագետ Գ. Ստեփանյանի դիտարկմամբ՝ «գերեզմանոցային ծեսում մաղը զուտ կիրառական իր չէ, սովորական տարա, որով տարվում է քաղցրավենիքը, այլ՝ խորհրդանշական լիցք ունեցող առարկա։ Այս դեպքում արդիական է մաղի՝ անցանելիությունն ապահովելու գործառույթը։ Մաղ-երկնքով/երկնային դռնով քաղցրավենիքն ուղարկում են այն աշխարհ, այնտեղ գտնվող հոգիներին, որոնց մարմնավորումներն են երեխաներն ու աղքատները։ Ծիսական այս ուտեստը այն աշխարհին է պատկանում, այնտեղ գտնվող ուժերի բաժինն է, հետևաբար այն այլևս չի կարող գտնվել այս աշխարհում. պետք է սպառվի այն աշխարհի տանող ճանապարհին կամ, ծայրահեղ դեպքում, թողնվի այս և այն աշխարհների սահմանին՝ գերեզմանոցում»⁷⁴։

⁶⁸ Բանասաց՝ Թամար Հակոբյան, ԴԲԱՆ 2022, Բյուրական։

⁶⁹ Топорков 2009, 435.

⁷⁰ Պետոյան 2016, 478։

⁷¹ Նազարեանց 1878, 49։

⁷² Топорков 2009, 435.

⁷³ Բանասաց՝ Ծովինար Սիրականյան, ԴԲԱՆ 2022, Վարդաձոր։

⁷⁴ Ստեփանյան 2020, 244-245։

Մաղը և ժողովրդական բժշկությունը

Մաղը դիտարկվում է որպես հրաշագործ առարկա, գործիք և կիրառվում է նաև ժողովրդական բժշկության մեջ: Սասունի ազգագրական նյութերում դողէրոցքով հիվանդին բուժելու համար մոր առաջնեկը յոթ աղբյուրից կամ յոթ տնից ջուր էր հավաքում առանց խոսելու, հավաքողի մայրը մաղը բռնում էր դողացնողի գլխին, իսկ բերողը լցնում էր⁷⁵:

Ժողովրդական բժշկության մեջ հիվանդության մի տեսակ կա, որ խոսակցական լեզվով կոչվում է «պորտ ընկնել»⁷⁶: Խոսքը, հավանաբար, պորտի ճողվածքի մասին է, որը տեղի է ունենում հիմնականում ծանրություն բարձրացնելիս: Այս հիվանդությունը նույնպես բուժում էին մաղի միջոցով: «Պորտ քաշողը»⁷⁷ «հիվանդին պառկեցնում էր մեջքի վրա: Լաթի մեջ մի բուռ աղ էր լցնում, կապում, դնում ուղիղ պորտին, մաղի կողքը վերևից իջեցնում գնդի վրա, մաղը կանգնած դիրքով պարանով կապում հիվանդի մեջքից: Կես ժամվա չափ նույն դիրքով պահում էր, ապա թուլացնում, բաց էր անում նույն աղի գունդը կամ սոխը դնում պորտի կենտրոնում ու գոտիով պինդ կապում: Մի քանի օր անց բուժողը գալիս էր, գոտին վրայից արձակում, ստուգում ու տեսնում, որ պորտն արդեն ուղղվել է»⁷⁸:

Ժողովրդական հավատալիքներում պորտն ընկալվել է որպես աշխարհի կենտրոն և մարդկության առաջացման վայր: Համարվել է որպես վերարտադրության ու պտղաբերության, բեղմնավորող ուժի⁷⁹ խորհրդանիշ: Այս մասին է վկայում Սյունիքի հայտնի Պորտաքարը, որը կարևոր ուխտատեղի է չքեր կանանց համար: Կարծում ենք, որ «ընկած պորտը տեղը գցելու» համար մաղը որպես գործիք ընտրելը պատահական չէ: Այստեղ պորտը «աշխարհի կենտրոնն է», իսկ մաղը՝ երկիրը, և երկուսի «համագործակցությամբ» ամբողջանում է վերջնարդյունքը՝ բուժումը:

Մաղը՝ հմայության և գուշակության գործիք

Ժողովրդական հավատալիքներում մաղը օգտագործվում է որպես հմայության⁸⁰, գուշակության գործիք և մինչև օրս էլ կենցաղավարում է Զավախքում, Շիրակում, Արագածոտնում և ազգագրական այլ շրջաններում: Երևույթը գրական հայերենում կոչվում է *մաղաբախություն*, այսինքն՝ մաղը

⁷⁵ Պետոյան 2016, 476:

⁷⁶ Կարապետյան 1962, 101-102:

⁷⁷ Լալայան 1903, 155:

⁷⁸ Կարապետյան 1962, 102:

⁷⁹ Ըստ կենդանակերպի համաստեղությունների վերաբերյալ միջնադարյան պատկերացումների՝ մարդու մարմնի մասերից պորտը համընկնում է կույս համաստեղության հետ, տե՛ս Բադալյան 1970, 41, 145:

⁸⁰ Հայոց մեջ տարածված է եղել նաև այլուրով հմայելու սովորույթը: Հր. Աճառյանը հիշատակում է «ալիւրադիւթ» (ալիւրով հմայող) բառը: Կարծում է, որ «ալիւրը» (հնագույն ձևը՝ «ալեւր») բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է al «աղալ» արմատից, տե՛ս Աճառյան 1971, 94:

բախելով հմայել, գուշակել, և վկայված է V դարից: Հովհան Մանդակունին իր և նախորդ ժամանակների հմայությունների դեմ գրելով՝ բազմաթիվ տեսակների մեջ թվարկում է նաև մադաբախությունը⁸¹: Մադաբախության ժամանակ մատից կախել են մաղը և տվել կասկածյալ մարդկանց անուններ: Որ անվան դեպքում մաղը պտտվել է, այդ մարդու հանցագործ լինելը հաստատվել է⁸²:

Ժողովրդի մեջ մաղով կատարվող գուշակության ամենատարածված տարբերակը կոչվում է «*նեպր դներ*»⁸³: Գործողությունը հիմնականում կատարվում է որևէ սրբից շնորհի ստացած կանանց կողմից: Նպատակը հիվանդի բուժման միջոցն ու եղանակը պարզելն է: Նախապես չօգտագործված մադի վրա ամրացված է լինում մեծ ու տափակ գլխով մեխ: Նետ դնողը՝ գուշակը, երկու ձեռքի ցուցամատներով բռնում է մաղը և երեք հիմնական հարցերի միջոցով պարզում՝ ա) հիվանդը բժշկի՞ հիվանդ է, թե՞ սրբի, բ) ո՞ր սրբի հիվանդն է, գ) հիվանդն ինչո՞վ գնա «սրբի դուռը»:

Հարցերից յուրաքանչյուրը տրվում է երեք անգամ, և պարզվում է «նետի ուղղությունը», թե այցելուն «*ո՞ր նեպրի հիվանդն է*», և մաղը դեպի ո՞ր սուրբն է ուղղորդում հիվանդին: Կարծում ենք՝ գուշակության «*նեպր դներ*» անվանումը կապված է գործողության վերջնարդյունքի հետ՝ այն ուղղության, որով պիտի շարժվի հիվանդը կամ՝ հիվանդատերը: Ի վերջո, գործողությունը կատարելիս մաղը բռնում են երկու ցուցամատով, որի կազմած անկյունը նետի սլաք է հիշեցնում: Ցուցամատի ամենակարևոր գործառնություններից մեկը, որպես սլաք, ինչ-որ բան մատնացույց անելն է կամ ուղղություն ցույց տալը⁸⁴:

Վանաձորում մինչև XX դարավերջը կենցաղավարել է «նետ դներ» մեկ այլ տարբերակ, որի նպատակը նույնպես հիվանդության բուժման եղանակը որոշելն էր: Եկեղեցիների անուններ տալով՝ *հիկկի*⁸⁵ վրա շարքով փաթաթել են բրդյա թել կամ բամբակ, իլիկը հորիզոնական դիրքով դրել են ջրով լի թասի վրա և ծածկել մաղով: Որոշ ժամանակ անց հանել են մաղը, վերցրել իլիկը և քանդել փաթաթած թելը կամ բամբակը: Որ անվան վրա անարգել քանդվեր,

⁸¹ Ալիշան 2021, 238:

⁸² Քաջունի 1847, 181:

⁸³ Ի թիվս հմայության բազմաթիվ ձևերի՝ ժողովրդի մեջ ընդունված է եղել նաև **նետահմայությունը**: Մանվել վարդապետ Քաջունին այսպես է նկարագրում այն. «Այս եղանակ հմայության հին ատենը Ասիայի մեջ կը գործածուի: Տաճկներն ալ այս եղանակաւ սովորութիւն ունէին պատերազմաց յաջող կամ անյաջող ըլլալը գուշակելու: Զանազան սլաքներու վրայ պաշարելու քաղաքներուն անունները կը գրէին՝ կապարճին մէջ կը լեցընէին եւ կը քաշէին. Ինչ կարգաւ ելլէր նէ, այն կարգաւ կը պաշարէին քաղաքները», Քաջունի 1847, 181:

⁸⁴ Հմայական գործողության նկարագրությունն ըստ բանասացի, տե՛ս Խաչատրյան 1999, 241:

⁸⁵ Հնագետները պեղումների ընթացքում գտել են տարբեր նյութերից պատրաստված բազմաթիվ իլիկներ, որոնք առկա են Հայաստանի ողջ տարածքում՝ սկսած մ.թ.ա. VI հազարամյակից (Թումանյան 1993, 134, Aghikyan 2021, 64):

հիվանդը ուխտի պիտի գնար այդ եկեղեցի⁸⁶: Հայտնի է, որ ժողովրդական հավատալիքներում թելը (բամբակը, բուրդը՝ թելի հումք) խորհրդանշում է կյանքի տևողությունը (կյանքի թելը կտրվել-մահանալ): Առասպելաբանության մեջ իլիկը անդրաշխարհի տանող ճանապարհի գործիք է⁸⁷, իսկ ջուրը՝ այս և այն աշխարհների տարանցիկ ուղին ապահովող միջավայր: Այսպիսով՝ գուշակության երկրորդ տարբերակում ավելանում են անդրաշխարհի հետ կապվող երեք գործիքներ՝ ջուր, թել և իլիկ, որոնք փակվում են երկնքի խորհրդանիշ համարվող մաղով, որոնցով գուշակվում է «նեպի ուղղությունը»:

Ազգագրական որոշ շրջաններում «նետ դնելը» կոչվում է «մաղ պարել»⁸⁸: Ազգագրագետ Գ. Շագոյանի դիտարկմամբ՝ «մաղ պտտելու» գործողությունը «մաղ պտտելու» միջոցով «բացում է» անհայտի դուռը⁸⁹, տվյալ դեպքում՝ հիվանդության և դրա բուժման հետ կապված եղանակների:

Շիրակի Վահրամաբերդ գյուղում նետի մաղը ունեցել է մեկ այլ գործառույթ ևս: Երաշտի ժամանակ Պասո մամը, որը Կարմիր Ավետարանի խնամակալն էր, մատուռում պահվող նետի մաղի մեջ դնում էր Ս. Գիրքն ու հանում դուրս, մաղը պարզում երկինք և աղոթք մրմնջալով՝ անձրև խնդրում: Սպասված արդյունքը չէր ուշանում⁹⁰:

Եզրակացություններ

Մաղը կենցաղային, կիրառական գործիք է, որը ժողովրդախոսակցական լեզվում ունի դարձվածաբանական և իմաստաբանական հարուստ կիրառություն: Առարկան առանձնանում է իր տեսակների և վերջիններիս բարբառային տարբերակների առատությամբ:

Առասպելաբանության մեջ մաղը խորհրդանշում է երկինքը և հաճախ դառնում ժամանակի ցուցիչ: Ժողովրդական ու քրիստոնեական ծիսաշարում մեծ դեր ու նշանակություն ունի՝ լինելով այս և այն աշխարհների սահմանաբաժան: Քննվող առարկան առավել ծավալուն դրսևորում ունի մանկան ծննդի, հարսանեկան, թաղման, անձրևաբեր ծեսերում: Նկատելի է վերջին հարյուրամյակում մաղի՝ որպես կենցաղային-ծիսական առարկայի փոխարինումը խոհանոցային այլ առարկաներով (մաղ → սկուտեղ → զամբյուղ, մաղ → տոպրակ):

Որպես գործիք՝ մաղն օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ՝ հիմնականում դողերոցքի և պորտի ճողվածքի ժամանակ: Հայաստանի ազգագրական որոշ շրջաններում մինչև օրս էլ կենցաղավարում է գուշակու-

⁸⁶ Նյութը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գրադարանի վարիչ Նաիրա Մովսիսյանին: Բանասացն անձամբ ներկա է գտնվել գուշակության գործընթացին:

⁸⁷ Հմմտ. ՀժՀ 1959, 238, ՀժՀ 1962, 436:

⁸⁸ Լալայան 2004, 224:

⁸⁹ Շագոյան 2011, 209:

⁹⁰ Բանասաց՝ Արաքսյա Չախոյան, ԴԲԱՆ 2022, Վահրամաբերդ:

թյան ձևերից մեկը՝ նետ դնելը, որի գործիքը մաղն է: Այս ամենն իր դրսևորումներն ունի բանահյուսական գրեթե բոլոր ժանրերի տեքստերում:

Գրականություն

- Աբեղյան Մ. 1940, Ժողովրդական խաղիկներ, գյուղական փոքր յերգեր իրենց փոփոխակներով, Յերևան, «Հայպետհրատ», 583 էջ:
- Ալիշան Ղ. 2021, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնները, Երևան, «Էդիթ Պրինտ», 312 էջ:
- Աճառյան Հր. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 700 էջ:
- Ավագյան Ս. 1978, Արճակ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 8, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 188 էջ:
- Բադալյան Հ. 1970, Օրացույցի պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 566 էջ:
- «Բարև Արև» կայք 2022, <https://www.facebook.com/parev.arev?mibextid=ZbWKwL>, ապրիլի 11 (ներբեռնման օրը՝ 23.11.2022):
- Բդոյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էջ:
- Բդոյան Վ. 1986, Հայկական աղամաններ, Երևան, «Սովետական գրող», 164 էջ:
- Գալստյան Հ. 2008, Դաշտային բանահյուսական և ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԲԱՆ), Շիրակ, Վահրամաբերդ:
- Գալստյան Հ. 2022, ԴԲԱՆ, Գեղարքունիք, Վարդաձոր:
- Գալստյան Հ. 2022, ԴԲԱՆ, Գյումրի:
- Գալստյան Հ. 2022, ԴԲԱՆ, Արագածոտն, Բյուրական:
- Գալստյան Հ. 2022, ԴԲԱՆ, Երևան:
- Գալստյան Հ. 2022, ԴԲԱՆ, Գեղարքունիք, Գավառ:
- Գոգոյան Գ. 2022, Մաղը միայն ցորեն մաքրելու համար չէ, Պատմություն՝ «Բարբառասերների ու բանահավաքների ակումբի» բացման առթիվ, մայիսի 2, <https://www.facebook.com/gohar.hakobyan.940> (ներբեռնման օրը՝ 02.12.2022):
- Գևորգյան Թ. 1999, Լոռի (Տաշիր-Ձորագետ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 20, Երևան, «Գիտություն», 269 էջ:
- Թումանյան Գ. 1993, Ուշանի դամբանաթումբը, Պատմա-բանասիրական հանդես, N 1-2, էջ 134-146:
- Լալայեան Ե. 1896, Ջավախք, Ազգագրական Հանդես, գ. Ա, Շուշի, տպ. Ա. Մահտեսի-Յակոբեանց, էջ 274:
- Լալայեան Ե. 1903, Բորչալուի գաւառ, Ազգագրական Հանդես, գ. X, Թիֆլիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, էջ 232:
- Լալայան Ե. 1983, Երկեր, հինգ հատորով, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 458 էջ:
- Լալայան Ե. 1988, Երկեր, հինգ հատորով, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 507 էջ:
- Լալայան Ե. 2004, Երկեր, հինգ հատորով, հ. 3, Երևան, «Գիտություն», 382 էջ:
- Լիսիցյան Ստ. 1969, Չանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 335 էջ + տախտակներ (138 էջ):
- Լիսիցյան Ստ. 1981, Լեռնային Ղարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 144 էջ:
- Խաչատրյան Ռ. 1999, Թալին, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 19, Երևան, «Գիտություն», 280 էջ:
- Խաչիկյան Լ. 2012, Աշխատություններ, հ. Ա, Երևան, «Նաիրի», 547 էջ:

- Խեմյան Է. 2008, Իջևան (Ձորովոր), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 25, Երևան, «Գիտություն», 490 էջ:
- Կարապետյան Ե. 1962, Սասուն, ազգագրական նյութեր, Երևան, «Հայպետհրատ», 202 էջ:
- Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԺՀ) 1959, հ. 1, Այրարատ, ընդհանուր խմբագրությամբ՝ ակադ. Հովսեփ Օրբելու, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 672 էջ:
- ՀԺՀ 1962, հ. 3, Այրարատ, ընդհանուր խմբագրությամբ՝ ակադ. Հովսեփ Օրբելու, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 673 էջ:
- ՀԺՀ 1963, հ. 4, Շիրակ, հատորը պատրաստեց և նախաբանը գրեց Մ. Մկրտչյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 552 էջ:
- ՀԺՀ 1984, հ. 12, Տուրուբերան (Մուշ), հատորը կազմեց և տպագրության պատրաստեց Վերժինե Սվազյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 651 էջ:
- ՀԺՀ 1985, հ. 13, Տուրուբերան (Մուշ-Տարոն), հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Ավարդ Ղազիյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 616 էջ:
- ՀԺՀ 1999, հ. 14, Վան-Վասպուրական, հատորը կազմեց և տպագրության պատրաստեց Ավարդ Ղազիյանը, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 592 էջ:
- ՀԺՀ 1998, հ. 15, Վան-Վասպուրական, հատորը տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Վերժինե Սվազյանը, Երևան, «Ամրոց», 512 էջ:
- Հայրապետյան Թ. 2004, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 217-227:
- Հարությունյան Ս. 1960, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 172 էջ:
- Հարությունյան Ս. 1965, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 392 էջ:
- Հարությունյան Ս. 2006, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 504 էջ:
- Հովսեփյան Ռ. 2017, Հայաստանի եզդիների «Բուկա բարանե» («Անձրևի հարս») և մյուս անձրևաբեր ծեսերը, Էջմիածին, Ա, էջ 114-146:
- Մալխասեանց Ստ. 1944, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Երեւան, ՀՍՍՌ պետ. հրատ., 614 էջ:
- Մկրտչյան Ս. 2016, Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, «Գիտություն», 400 էջ:
- Մշակ 1872, N 48, Նամակ ԺԵ, Պ. Րաֆֆիի ուղետուրութիւնից Պարսկաստանում, էջ 4:
- Մովսիսեան Ս. (Բենսե) 1916, Հնութիւններ Տաճկահայաստանում, Համբաւաբեր, հասարակական-գրական շաբաթաթերթ, Թիֆլիս, N 25, յունիսի 19, առաջին տարի, էջ 798:
- Մովսիսեան Ս. (Բենսե) 1972, Հարք (Մշո Բուկանդիս), Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 183 էջ:
- Մուշեղ Վարդ 1899, Երզն իբր հոգեկան պէտք, Բիւրակն, թիւ 50-51-52, էջ 803-805:
- Նազարեանց Յ. 1878, Նախապաշարմունք, հատոր 1, Տփլիս, «Յովհաննէս Մարտիրոսեանցի տպարան», 99 էջ:
- Շագոյան Գ. 2011, «Յոթ օր յոթ գիշեր» հայոց հարսանիքի համայնապատկեր, Երևան, «Գիտություն», 616 էջ:
- Չոլաքյան Հ. 2022, «Քեսապի հարսանեկան երգեր», նոյեմբերի 7, <https://www.facebook.com/hagop.cholakian.9> (ներբեռնման օրը՝ 07.11.2022):
- Պետոյան Վ. 2016, Սասուն, Երևան, «Նախաբեմ», 743 էջ:
- Սասնա ծոեր 1951, հ. Բ, մաս Բ, Ընդհանուր խմբագրությամբ ակադ. Մանուկ Աբեղյանի, Երևան, «Հայպետհրատ», 1005 էջ:
- Սիմոնյան Լ. 2015, Անհիշատակ պառավը հայ բանավոր ավանդության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 181-202:

- Ստեփանյան Գ. 2020, Նոր տարուց վերջին զանգ. տոնական պրակտիկաներ, հիշողություն և վերակազմում, Երևան, ՀԱԻ հրատ., 432 էջ:
- Սուքիասյան Ա., Գալստյան Ա. 1975, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 634 էջ:
- Փորքեյան Խ. 1971, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 230 էջ:
- Քաջունի Մանուէլ վարդապետ (Հ. Մ. Ս.) 1847, Աւելորդապաշտութիւն, Սուտ գիտութիւնք եւ արուեստք, Բազմավէպ, N 12, էջ 179-182:
- Топорков А.Л. 2009, Решето, Славянские древности 2009. Этнолингвистический словарь под общей редакцией Н.И. Толстого, т. 4, Москва «Международные отношения», 656 с.
- Aghikyan L. 2021, New Elements of Burial Practice in the Kura-Araxes Culture: The Discovery of Karnut Cemetery (Armenia), Quaternary International, N 579, p. 59-71.

ՄԱԴԻ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍԵՐՈՒՄ

Համիկ Գալստյան

Ամփոփում

Մաղը՝ որպես կենցաղային առարկա, կարևոր դեր է խաղում մարդու ծիսական կյանքում, հանդես է գալիս բանահյուսական տեքստերում՝ իր գործառության որոշ դրսևորումներով: «Մաղ» բառն ունի դարձվածաբանական հարուստ կիրառություն, որտեղ բացահայտվում են այս կենցաղային առարկայի բազմանշանակությունն ու հրաշագործ հատկությունները: Մաղը, զուգորդվելով երկնքի և սերտորեն կապված լինելով երկնային լուսատուների՝ արևի, լուսնի, աստղերի հետ, լայնորեն կիրառվում է ժողովրդական ու քրիստոնեական տոնաճիսական համակարգերում, հավատալիքներում և իր բազմակի դրսևորումներն ունի հայ բանահյուսության մեջ:

Մաղը՝ որպես հրաշագործ առարկա, կիրառվում է ժողովրդի հավատալիքային համակարգում՝ անձրևաբեր ծեսում, ժողովրդական բժշկության և հմայության մեջ: Հայաստանի ազգագրական որոշ շրջաններում մաղի միջոցով գուշակություններ են անում: Այդ գործողություններից մեկը՝ «նետ դնելը», Շիրակում կենցաղավարում է մինչև օրս:

Բանալի բառեր՝ մաղ, տիեզերական ու ժամանակային պատկերացում, ժողովրդական տոն, հարսանեկան և թաղման ծես, անձրևաբեր ծես, ժողովրդական բժշկություն, գուշակություն:

ФУНКЦИОНАЛЬНОЕ И ОБРЯДОВОЕ ЗНАЧЕНИЕ РЕШЕТА В ФОЛЬКЛОРНЫХ ТЕКСТАХ

Асмик Галстян

Резюме

Решето как предмет быта играет важную роль в обрядовой жизни человека. Слово «решето» имеет богатое фразеологическое употребление, где раскрываются многозначность и чудодейственные свойства рассматриваемого предмета быта. Решето, связанное с небом и небесными светилами, солнцем, луной, звездами, широко используется в народной и христианской системе праздников, верованиях и имеет свои многочисленные проявления в армянском фольклоре.

Решето в качестве чудодейственного предмета используется в системе народных верований, в обряде вызывания дождя, народной медицине и магии. В некоторых этнографических районах Армении гадания проводятся с помощью решета. Одно из таких действий – «класть стрелу», практикуется в Шираке по сей день.

Ключевые слова – решето, визуализация пространства и времени, народный праздник, свадебный и похоронный обряд, обряд вызывания дождя, народная медицина, гадание.

USAGE OF SIEVE AND ITS RITUAL SIGNIFICANCE IN FOLKLORE TEXTS

Hasmik Galstyan

Abstract

The sieve, as a household item, plays an important role in the ritual life of a person. The word "sieve" has a rich phraseological use, which reveals the ambiguity and miraculous properties of the household item in question. The sieve, associated with the sky and closely associated with the heavenly bodies, the sun, the moon, the stars, is widely used in the folk and Christian system of holidays, beliefs and has its numerous manifestations in Armenian folklore.

The sieve, as a miraculous object, is used in the belief system of the people, in the rain making rite, folk medicine and magic. In some ethnographic regions of Armenia, divination is done with the help of a sieve. One of these actions, "placing an arrow", is practiced in Shirak to this day.

Key words – sieve, visualization of space and time, folk festival, wedding and funeral rite, the ritual of making rain, traditional medicine, divination.